

## ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻԱԽԹԵԱՆ ԵԹԹՆԵԱԿԲ ԵՐՈՒԱՍԱՂԵՄԻ ՄԵԶ

17րդ տարին ըլլալով, տարւոյս Յունուար 22-29 երկարող եթնակի միջոցին, տարրեր Եկեղեցիներու և գաւանանքներու պատկանող Սաղիմարնեակ քրիստոնեաներ — հոգեւորական թէ աշխարհական — քով քովի գալով, նշեցին Եկեղեցիներու Միութեան եթնակը:

Բացի Յոյն Օրթոսութեաներէն և Ղպտիներէն, այս տարի ես բոլոր միւս Եկեղեցիները իրենց գովելի մասնակցութիւնը բերին եկումենի ոգիի արգասիքը եղող և տարուէ տարի ծաւալող այս շարժումին, միացնելով իրարու հոգեւորւի իրենց աղօթքներն ու բանաւոր խնդրանքները:

Եթնակը բացուեցաւ կիրակի, 22 Յունուարի առաւատեան ժամը 11ին, Ս. Փրկիչ՝ Ֆրանչեսկաններու Մայր Տաճարին մէջ, Հոյ-Կաթոլիկէ համայնքի Պատր. Փախանորդ Գերյ. Տ. Յովակիֆ Մ. Վրդ. Շատարեկեանի մտառւցած Ա. Պատարագով, Երգեհուսանար Պր. Վահէ Գուլյայնեան և իր շնորհալի Տիկինը՝ Շոքէ, մին իր ճարտար նուազածութեամբ իսկ միւսը՝ իր թովիչ ու մարզուած ձայնով, հայկական Ս. Պատարագին թովշանքն ու քաղցրութիւնը փոխանցեցին բազմաթիւ ու բազմազդի ներկաներուն, սրոնց գուշիւը կը գտնուէր Լուտինաց Մօնս. Ճիշտօմօ Գէլթրիթի Պատրիարքը: Արարեկէնով քարոզ մը խօսնեաւ Ասորի-Կաթոլիկներու Պատր. Փոխանորդ Մօնս. Փիէր Ապա էլ-Անատ:

Նոյն օրը, Երեկոյեան, աղօթքանով կար Անկլիքաններու Սէյնթ Ջորճ Մայր Տաճարին մէջ: Հակոսակ վայրին հեռաւորութեան, եկեղեցին լեցուն էր ամբողջու-

### ՅՈՐԵԼԵԱՆ ·

### ԲԱՆԱՍՏԵՂ ՎԱՀԱՆ ԹՔԷԵԱՆԻ

Ուրախութեամբ կը տեղեկանանք Խըմբագրութեանն զրկուած շը թէ այս Փետրուարի 10ին, Փարիզի մէջ պիտի տօնուի Պր. Վահան Թէքենանի գրական գործունէութեան քառասանմեակը: Քաղցր է միզ յուսալ թէ, ինչպէս թէրթիրու մէջ քանից տեղեկութիւններ տրուեցան այս մասին, ուրիշ բազմաթիւ հայաշատ վայրերու մէջ ևս պիտի լինին այս առթիւ ազգային սիրոյ և յարգանքի սրտագին արտայայտութիւններ, սրոնց սրտանի է ստուգիւ ազգասէր և միհտատաղոնդ բանաստեղծը: «Սիոն», մտօնակցելավ այս ընդհանուր զգացմանց, կը մաղթէ որ տակուին բազում տարիներ ապրի պատուական Յորկլեարը, աւելի կինսաւէտելու համար հայ դրականութիւնը իր մաքուր քնոտրին այնքան ազնիւ ներշնչութիւններովը:

(«Սիօն», 1984, Բ. Յարի, Փետրուար,  
թիւ 2, էջ 61):

### ՊՐ. ԳԱԼՈՒՍ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՄԵՐ ՄԷԶ

Փետրուար 9ի երեկոյին, յանակնկալը մեր մէջ ունեցանք Ս. Աթոռոյս պատուական բարերարներէն Պր. Գալուստ Կիւլպէնկանը, Եղիպատոս և Սիւրբու այցելութեանը առթիւ ցանկացած էր անցնիլ Ս. Երկրէն, տեսնել Երուալշէմը — ուր եկուծ էր անգամ մը միայն, կանուու, 9 տարիկան հասակին, իր բարեկպաշտ ծնողացը հետ և, երկրպագել տնօրինական Ս. Տնկեաց, համբուրել Գլխադիրը և տեսնել Հայկական նուիրական այս Հաստատութիւնը: Կարիկի շեզպանութեան գինքը, որ ընդունի հանդիսական ընդունելութեան մը նուազագոյն պատիւը գէթ: իր ազնուական համեստութիւնը մերժեց տաճն ցոյց, ուզերձ և երգ: ... Պատկառանքով ծնրագրեց Գլխադրի գերեզմանին առջև և հաւաաքով ընդունեց օրնութիւնը՝ զոր տուին իրեն հոն Ս. Պատրիարքը, և Տ. Մեսրու և Տ. Սմբատ Եպիսկոպոսունք:

(«Սիօն», 1984, Բ. Յարի, Մարտ,  
թիւ 2, էջ 65):

թեսմբ, Անգլիերէն, Արաբերէն և Ֆրանսերէն լիզուներով կատարուած Ս. Գրտկան ընթերցումներու և քանի մը Կյունիրու երգեցողոթեան աւարտին, խօսք առին Յոյն - Կոթողիկ կղերական մը և Անկիթան երեց մը, ոռաջինը Արաբերէնով իսկ երկրորդը Անգլիերէնով որաւայատուելով քրիստոնէական սիրոյ և համագործակցութեան մասին Ներկայ էին մեզմէ Հոգչ. Տ. Գուսան Արզ. և Բարչ. Ալեքս Սրկ.:

23 Յունուար, Երկուշաբթի երեկոյ, մերն էր կարգը: Ս. Յոկորեանց Մայր Տաճարը իր խորհրդաոր ու կիսամութի կամարներուն ներքեւ ընդունեց այլադաւան քրիստոնէաններ, հոգեսորական թէ աշխարհական, որոնք լարսումզ պիտի հետեւէին մեր եկեղեցոյ Հանգստահան ժամու (Նակում անունով ծանօթ) աղօթքներուն և մեղեդիններուն: Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Կորդաց Անգլիերէն քարոզ մը, Փակման աղօթքը ըրաւ, Հայերէնով, Տորմիսիոն Արբայտրանի գունահայր Հայր Նիկողայոս կէնտէր:

24 Յունուար, Երեքշաբթի, Լուտերականներուն էր կարգը: Գերմաններէն, Արաբերէն և Անգլիերէն լիզուներով երգուած և արտասանուած մեղեդիններէ և Սուրբ Գրտկան ընթերցուածներէ բազկացած յայտագիր մը գործադրուեցաւ, որուն ընթացքին Նիկիական Հաւատամքն ու Տէրունական Աղօթքն ալ լուսեցան (Վերջինը՝ բազմաթիւ լիզուններով): Մեզմէ ներկայ էին Հոգչ. Տ. Բարեղ Վրդ. և Հոգչ. Տ. Գուսան Արեղայ, որոնք ապա, բոլորին հետ քովասի սրահը բարձրանալով, ուրիշ տարիներուն հմտան, ճաշակեցին հաց ու գինի՝ իրը նշան քրիստոնէական եղանակութեան:

25 Յունուար, Զօրեքշաբթի երեկոյ, Քաղաքի Հրէական բաժնին մէջ գոնը-լոզ եթավական եկեղեցին փութացած էին այլադաւան քրիստոնէանների: Հապէշներու Գերշ. Տ. Բաւանարաս Եպս.ը, կէտ ժամ տեսող արարողութեան աւարտին, ըրաւ իր խոսքը Անգլիերէն լիզուով:

26 Յունուար, Հինգշաբթի ժամը 4ին, Սիոն լիբրան կատարին գոնուող Վերջին Ըսթեաց վերնատան մէջ կատարուեցաւ աղօթաֆողներուն ամենէն տպաւուրիչ: Տպաւորիչ՝ գուցէ անոր համար, որ վայրը սեփականութիւնը չէ որևէ համայնքի – առնուատէիր և գրանցիի զգացումները չէզո՞քացած են – ու մանաւանդ գտնաւելուն Քրիստոնէական եկեղեցոյ կաղամաւրման վայրին վրայ: Պոյդ կտակառաններէն եղան ընթերցումներ՝ Երրարերէն, Ֆրանսներէն, Արամերէն (Քրիստոսի խօսած լիզուն), Արաբերէն, Յունարէն, Գերմաններէն և Անգլիերէն լիզուններով, Մեր Սարկացանները Նոգինները են, առաջնորդութեամբ Տ. Գուսան Արեղայի, իրենց մասնակցութիւնը բերին յայտագրին, «Սիոնի բորիք» և «Ասորիուրդ մէծ» շարականներով: Հանգէտ եկաւ նաև Տորմիսիոն եկեղեցոյ երկսեռ երգչախումբը, Աղօթափողով գոնը գոնուող վակուեցաւ Ս. Հոգչոյ՝ Քաղաքի մէջ:

27 Յունուար, Ուրբաթ, աղօթափողով կայացաւ Ֆրանչիսկեաններու եկեղեցին մէջ: Ներկայ էին մեզմէ Տ. Բարեղ Վրդ. և Տ. Գուսան Արզ. Եղան հաւաքերէն, Ֆրանսներէն, Անգլիերէն և Արաբերէն լիզուններով Աստուածաշնչական ընթերցումներ: Լատիններէն, իտալիերէն և Սպաններէն լիզուններով երգուեցան հոգեւոր տաղեր: Համայնքապեսի վոխանորդ Հայր Զօրէ Պուսթանի տպաւորիչ քառոզվ մը շէշտեց քրիստոնէական սիրոյ և համագործակցութեան կարիքը, մասնաւրաբր այս երկրին մէջ և այս օրերուն: Հանրածանօթ և ալեղարդ երգեհոնահար Տիար Օկոսիթին Լամա նուազեց Պախի հոգեսր երաժշտութենէն պատահիներ:

28 Յունուար, Շաբաթ, Ասորւց Ս. Մարկոս Աւետարանչի փոքր եկեղեցին ու գաւիթը – հակառակ ցուրտին – լիցուած էին բազմազիքի հաւատացեալներով: Մէծ մասսմբ Ասորիերէն լիզուններով եղած աղօթքներու և շարականներու հողքին եղան նաև Անգլիերէն, Ֆրանսներէն, Հայերէն (Կորնթացուց Թուլլիէն, Հոգչ. Տ. Գուսան Արեղայի հողմէ) և Արաբերէն լիզուններով ընթերցուածներ, Քարոզիչն էր Գերշ. Տ. Պէտուամ Եպս. Կակկառի: Յոյն - Կաթոլիկ Եպս. Լութֆի Լահնամ արտաքոյ յայտագրի խօսք առնելով, անդրագուրծաւ Ներսէս Համբըրոնացիի մասին, դրսաւելով եկեղեցիներու միութեան սրբազն նպատակին համար իր ի գործ գործ ջանքերը:

## ԱՄԱՆՈՐԻ ՀՈՆԴԵՍ ԺԱՌԱՆԿԱ. ՎԱՐԺԱՐԱԿԱՆԻ

Հակառակ աշակերտներու թիվին զգալի նուազումին — բաղաքական պայմաններ չարտունեցին նոր սաներու ժամանումը — այս տարի եւս մեր հոգեւոր դպրանոցէն ներս Ամանորը դիմաւորուեցաւ պատշաճ հանդիսաւորութեամբ:

Ըստ Հին Տօմարի Մամարին նախօրեակին — 13 Յունուար, Ուրբաթ —, Վարժարանի ճաշարանը, գեղեցկօրէն զարդարուած տօնածառով եւ մասամբ նորին, պատրաստ էր ընդունելու Ս. Պատրիարքն ու Միաբանութիւնը: Ըստ սովորութեան, անոնց սրահ մուտքի պահուն, ժառանգաւորներ հնչեցուցին Վարժարանի բայլերգը՝ «Միրտ ի սիրո»: Ներկայ էին նաև ուսուցիչներ եւ Ս. Սթոռոյ պաշտօնեաներ:

Վարժարանի Տեսուչ Լուսարարապետ Գերց. Տ. Գարեգին Արքապս. Գագաննեան ըրաւ հակիրճ եւ պատշաճ բացման խօսքը, որմէ ետք սաները, դեկապարութեամբ Վարժարանի Եւրոպական Երածշտութեան ուսուցիչ Տիար Վահէ Գալայնեանի, խրմբերգեցին Օհան Տուրեանէ գաղնաւորուած «Ժամանակի լարին վրայոն», որուն հեղինակն է Ն. Ամենապատութիւնը: Բարձ. Տահին Արք. Երկաթեան րրաւ պահին յարմար բանի մը խօսք: Ժառ. սաներ, դարձեալ Տիար Վահէ Գալայնեանի ղեկավարութեամբ, երգեցին «Անոյշ Հայաստան»ը, որմէ ետք չորս Ուրարակիրներ — Դէորդ Հալլանեան, Արմէն Ճունաւորեան, Վարդան Մելքոնեան եւ Կայծակ Մամիկոնեան — բաւարար յաջողութեամբ ներկայացուցին Թակոր Պարունեանի և Թաղաքավարութեան Վնասները զաւշտախալէն տեսարան մը:

Քանի մը վայրկեան ետք, մոււտք գործեց Կաղանդ Պապուկը, որ «օրօրալով-շորորալով» սրանին շրջանը ընելէ ետք բազմեցաւ կեղեռոնց՝ վեհափառօքէն, բաշխելու նախ իր բանաւոր եւ ապա նիւթական կաղանդէքները բոլորին: Այս տարուան բանաւոր կաղանդէքները յղացումն էին խիստ ճարտար ու պատրաստարան մտքի մը:

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը իր փակման խօսքին մէջ կանգ առնելով նորոգուող ժամանակի գաղափարին շուրջ, յորդորեց սաները զիտնալ յարգն ու արժէքը անոր եւ զգուշացուց զայն յումպէտս մսխելէ:

Միաբերան երգուած Տէրունական Աղօթքէ ետք, Ն. Ամեն. «Պահպանիչ»ով փակեց զուարթ այս հանդէսը:

29 Յունուար, Կիրակի երեկոյեան, Յոյն-Կաթոլիկներու եկեղեցւոյ մէջ կայացաւ եղբափակիչ աղօթաժողովը, բաղկացած մէծ մասամբ թիւզանգական ծէսով երեկոյեան ժամերգութեան աղօթքներէն — արտասանուած թէ եղանակաւորեալ — : Գերց. Տ. Լահնամ եպօ. պերճիմասս քարոզ մը տուաւ: Կատարաւեցաւ հացի, ցորենի, գինիի և ձէթի օրհնութիւն, որմէ ետք ներկաները — որոնց շարքին Հոգչ. Ֆ. Բարսեղ Վրդ. և Հոգչ. Տ. Գուսան Արք. — ճաշակեցին օրհնուած հացէն: Պատուասիրութենէ ետք ներկաները ցրուեցան, յաջորդ տարի վերստին հաւաքուելու երջանիկ ակնկալութեամբ:

Մէծ է այս աթիւ մեր գոհունատկութիւնը, հաստատելով թէ տարուէ տարի զանդուածներ աւելիով կը զգան կարիքը նմանօրինակ հանդիպումներու, և բարիքը որ անոնց միջացաւ պիտի ծաւալի նոյն արմատէն սերած Քրիստոնէական եկեղեցւոյ այլազան ճիւղաւորութեառուն վրայ: